



ԹԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱՐՈՅԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՏԵՇԵՍԻԿԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՒՄ

ԳԻՏԵԼԵԱՑ

ՃԱ. 8ԱՐԻ ԹԻՒ 15.

1853

ՕԳՈՍՏՈՍԻ 4.

ԹԱՐՈՅԱԿԱՆ

Փառք Աստվածոյ որ այսպիսի լուսաւորեալ դարու հասանք .

(Ե մը լրագրի մը մէջ կարգալով այլ և այլնիւթերու վրայ խորհրդածութիւններ , խնձի մեծ մատածմունքի պատճառ եղան այն խորհրդածութիւնները . տեսնելով որ լրագրապետը մէկ ազատ չամարձակ խօսուածքով մը , բոլը իր մտաց և իր դատմանը վրայ հաստատուած , իբրև բոլոր աշխարհիս կառավարութեան ընդհանուր գատաւոր մը արդարակորով , և ամէն բանին ընթացաքը ճանցող և բոլոր մարդկանց սրտերուն խորը թափանցող , և իր առաջարկութիւնները յաւիտենական ճշմարտութեան վճիռներու պէս յառաջ բերելով կը խօսի : Ոկսայ մտածել մէկ կող

մանէ մարդուս բնական բերմանը վրայ՝ թէ ինչպէս ճշմարտութիւնը բնութիւնը սիրէ և արդարութիւնը կը պատուէ , և իր բոլոր մտածմանը և գործքերուն վախճան զասնկ կը գնէ . և թէ ինչպէս կը ցանկայ որ իր ամէն մատածածները , խօսածները և գործածները 'ի ճշմարտասիրութենէ և յարդարասիրութենէ առաջեկած ըլլան . և ամէն մարդ ալ անանկ ճանչնայ : Եւ մէկալ կողմանէ ալ սկսայ մտածել իր բնութեան տկարու . թեանը և տգիտութեանը վրայ՝ որ շատ անգամ և շատ բանի մէջ կը սխալի , և չկրնար ինքիրեն ամէն բանին ճշմարտութիւնը ճանչնալ , և չկրնալով արդար

գատաստանընել՝ սխալ գործքերու ձեռք
կը զարնէ : Եւ ևս առաւել այս կողման
նէ զարմացայ՝ թէ ինչպէս վարպետու
թք հնարագիտութիւն կը բանեցընէ՝ թէ
մտածմանը մէջ, թէ խօսքերուն և թէ
գործքերուն մէջ, ծածկելու համար իր
տկարութիւնը և պակսութիւն . ջանա-
լով ցուցընելու իր ամէն մտածմունքը,
խօսքը և գործքը ճշմարտութեան աղ-
բիւրէն բղիած և արդարութեան ան-
խաբ կշնորովը չափած . և այսպէս հա-
մարձակ իրեն վկոյ կը կոչէ բոլոր աշ-
խարհըր, և կը հաստատէ իրեն առաջ-
նորդուած ըլլալը՝ ի ճշմարտութէ և յար-
դարութէ : Իսկից ինձի հետաքրքրութիւն
մը եկաւ ուրիշ շատ տեսակ յարոպայի
լրագիրներ ձեռք ձգելու, ու անոնց բա-
նեցուցած կերպերը դիտելու : Եւ որչափ
աւելի նոր մէկ լրագիր մը ձեռք առի,
այնչափ աւելի հաստատուեցայ այս
մարդկային բնութէն ընթացքին վրայ՝
տեսնելով որ առհասարակ ամէնքն ալ
նոյն ոճը բռնած են, ցուցընել՝ թէ ար-
դարութիւնը և ճշմարտութիւնը իրենց
կողմն են, և թէ իրենց կարծիքը անոնց
վրայ հիմնած են : Այս բանիս վրայ
սկսայ մեծ ցաւ մը զգալ սրտիս մէջ՝ որ
այսպէս ճշմարտութիւնն ու արդարու-
թիւն ջնջան դարձեր են, ամենուն ձեռքն
ընկած . ամէն մարդ ինչ որ կ'ուզէ կ'ը-
նէ, ու ետքը ճշմարտութեան ու արդա-
րութ անունով քող մը շինած, իր ըրա-
ծին վրայ կը փուէ կը գոյէ, և կ'ուրա-
խանայ ու կը պարծի ամենուն ցուցընե-
լով՝ թէ ահա իր քովն է ճշմարտութիւն :
Եւ այսպէս որ կողմն ալ դառնաս, և
որ մարդուն ըրածը տեսնել ուզես, թէ-
պէտ ամէնքն ալ իրարմէ տարբեր կը
գտնես և իրարու հակառակ, բայց ա-
մէնքն ալ կ'երենան աչքիդ ճշմարտու-
թիւններ և արդարութիւններ : Խնչ
կեղեցիկ տեսարան . բայց ըլլայ որ
մէկուն ձեռք դպցընես ու քողը վրային
վերցընել ուզես . ամենեին քննելու չ-
գար՝ թէ որ կ'ուզես գոհ սրտով մնալ,
հանգիստ ապրիլ չցաւելով խաբուելուդ
վրայ . և թէ որ չես ուզեր բարկացընել
այն ճշմարտութեանց տէրերը քեզի դէմ,

և թէ որ կ'ուզես բարեկամութիւնդ
պահել անոնց հետ :

Իսպիսի խորունկ մտածութեանց
մէջ ընկղմած կեցած ատենս՝ մէկ բա-
րեկամն ներս մտաւ ձեռքը լրագիր մը
առած, ինքը մեծ ուրախութեան մէջ .
ու երբ տեսաւ զիս ծանր մտածութեց
և սգոյ մէջ տիրած նստած, Խնչ է, բա-
րեկամ, ըստ, այդ ինչ տիրութեան
մէջ զքեզ կը տեսնեմ այսպիսի ուրախա-
լի ժամանակի մէջ :

— Ուրախալի ժամանակ . պատասխա-
նեցի . ուր էր թէ իրաւ ըլլար ըսածդ .
այս իմսրտիս ցաւն ալ և տիրութիւնս
ալ որ կը տեսնես՝ այս ժամանակիս
թշուառութեան վրայ է :

Իւս . Չըսե՞ս ուրեմն թէ պարապ
տեղը տիրեր ես . ով զիտէ, մինակ մնա-
ցած ինչ ծուռ մտածութիւններ, կամ
անցած գացած ժամանակներու զի-
պուածներ միտքդ պաշարեր ու զքեզ
տիրեցուցեր են :

— Չէ, պարոն . հիմակուան ժամանա-
կիս վրայ է իմսրտիս ցաւը . կը տեսնես
աս բազմաթիւ լրագիրները, ահա ա-
սոնք են որ զիս այսպէս կը տիրեցընեն :

Իւս . Եթէ այդպէս է, ահա ես
քեզի մեր ազգին լրագիրը բերի, որ օ-
տար ազգերուն լրագիրներէն պատճա-
ռած սրտիդ տիրութիւնը մեր ազգին
լուրերովը փարատես :

— Խնչ կ'ըսես :

Իւս . Այսու . թէ որ օտար ազգերը
իրենց լուսաւորութեան դարը անցու-
ցին, մենք ուրախանանք՝ որ լուսաւորու-
թեան կարգը մեզի եկած է : Ես փառք
կու տամ Իստուծոյ որ այսպիսի ազգեր-
նուս լուսաւորեալ դարուն հասանք :
Կու, կարդա սա լրագիրը, տեսնես թէ
ինչպէս շիտակ մարդավարութիւն կը
սովորեցընէ . ազգասիրութիւնը, քաղա-
քականութիւնը, ազգային հանձնարներուն
զարգացումը, ազատութիւն մտաց, կեն-
ցաղագիտութիւն, ասոնց ամենուն հիմը
կ'երեայ հիմա ազգելնուս մէջ, և կը տա-
րածուի այս լրագիրներուն ձեռքով : Խն-
չան դպցին այն ընդունայն հաւատքի
կոիներուն ողլալի ժամանակները, որ

մարդիկ իրարու գէմհաւատք պաշտպանենք ըսելով՝ մարդկութեն կորսուելուն պատճառ կ'ըլլային . դու այս հաւատքէն ես , ես այն հաւատքէն եմ ըսելով՝ իրարու ծուռ կը նայէին . տարբեր կարծիքի մէջ ծնած ըլլալին իրարու յանցանք կը սեպէին . Այդպիսի բրտութեն կարծիքները հիմա ամենուն մտքէն փարատեցաւ . հիմա ազգին շատերն իմացան՝ թէ կարծեաց տարբերութիւնը ազգին սպայծառութեան արգելք ըներ . երբ մէկ սիրտ մէկ հոգի ամէնքը ազգին յառաջադիմութեան ջանքն ունենան , առանց իրարու հաւատքին խառնուելու՝ աշխարհիս ամէն բարիքը կը ընան ձեռք բերել , և ամենէն լուսաւորեալ ազգերուն կարգն անցնիլ : Հիմա ամէնքն իմացան՝ թէ ազգի մը կործանման պատճառը հաւատքի կռիւն է , վասն զի անկից կը սկսի ատելութիւն մտնել ազգին մէջ . և ատելութիւնն է պատճառ ամէն չարեաց . ըլլալու բանի ձեռք զարնելով , ըլլալու բարիքներէն ալ զրկուիլ : Հաւատք ըսածդ սրտի և մոտքի բան է . ամէն մարդուն սրտին և մոտքին ովկը կը նայ խառնուիլ . Առուտուրը , քաղաքականութիւնը , ուսմունքը ծաղկեցընել ուզող մարդիկ ինչ պէտք է որ հաւատքի բան խառնեն , զիրար նախատեն : Այս () սմանեան տէրութեան օրինակը առնենիս կեցած է . հաւատքի խստութիւնը ինչուան որ ձեռքէ չթողուց՝ մկրցաւ ծաղկելու համբան մտնել : Տես թէ հիմա ինչ ազատութիւն է Պիօլոյ մէջ . ամէն մարդ իր ուզածը կ'ընէ . ովի ինչ կ'ըսէ . հերիք է որ ուրիշի վնասելու դործ մը ըլլայ ըրածնին : Տես հիմա . գնա Պիէյօլու պտրտէ , ինչ համարձակուի է . Եւրոպայի քաղաքներէն տարբերութիւն չունի . թատր կ'ըսէ , զբուանաց տեղուանք կ'ըսէ . զարդարած խանութները աչքդ կ'առնեն . ինչուան կանայք ազատ համարձակ կը պարտին ամէն տեղ , հագուած սրդուած խաթունները իրանութանութիւն կ'ընեն զարդարուած կրտակներուն մէջ . ովի ինչ կ'ըսէ . Այս ամէն բաները տեսնելով՝ ինչպէս չուրախանանք որ արևել

քի մէջ ալ քաղաքականութիւնը այս շափ սկսաւ առաջ երթալ , և զմեզ այս լուսաւորեալ դարուն հասուց : — Այդքափ խօսքերդ զիս միսիթարելու համար ըսիր :

ՏԱՐ . Ի՞նչ ըսել է . այսպիսի խաղաղասիրութեան լուսաւորեալ դարուն մէջ ինքզինքը գտնողը ինչ պատճառ ունի տիրելու . այլ մանաւանդ թէ ինքն ալ պիտի քաջալերուի , ու իր ձեռքէն եկած օգնութիր պիտի ընէ՝ որ քիչքիչ բոլորովին վերնայ մէջերնէս այն կեղծաւորական և վտանգաւոր ու ազգին կործանման պատճառ հաւատքի նախանձայուզութիր . ու դպրոցներով , ուսմունքներով , ձարտարարուեստ գիտուիները ծաղկին մեր հնարագէտ ազգին մէջ . որով մէկ կողմանէ ազգին պայծառութեան բարիքը վայելենք , մէկալ կողմանէ ալ ազգերնուս անունը հռչակուի Ի՞այց ինչ լուս կեցած պատախան մը չես տար . ինչ եղեր է քեզի , բարեկամ , մէկդի թող սա լրագիր . ները՝ որ միտքդ այդքափ շփոթեր են . առ , կարդա սա ազգային լրագիրը՝ որ քիչքիրտդ զուարթանայ . կարդա նոր նոր բացուած դպրատուններուն յառաջադիմութիւններ . կարդա ազգասիրական ընկերութեանց ըրած ջանքերը . կարդա նախապաշարմունքներու գէմ գրուած յօդուածները , մարդկանց փառասիրութենէն և շահախնդրութենէ առաջ եկած կրօնքի վէճերը , անոնց խարդախ գործքերը , և անոնց ընդունայն ջանքը զմարդիկ խարելու այսպիսի լուսաւորեալ դարուս մէջ :

— Կ իտակն ըսեմքեզի , բարեկամ , զուայդքափ խօսքերով իմ սիրտս միսիթարելու տեղ , իմ տիրութիւնս հարիւրաւ պատիկ աւելցուցիր . և ես ամէն մէկ խօսքերդ լսելուս՝ սրտիս ցաւը աւելնալով , մտացս յուահատաւթենէն բերանս կապուեցաւ : Այլ միտայն քու բարեկամութիւնդ ինձ սիրտ կու տայ խօսելու . պուլչետեւ ես զքեզ աղէկ կը ձանչ նամ որ բարեկամիրտ մարդ ես , և հիմա այս խօսքերը քեզմէ լսելով՝ մտքէս մէկ միսիթարական խորհուրդ մը կ'անցնի՝

թէ ուրեմն քեզի պէս շատեր կան ազգերնուս մէջ, որ բարեսիրտ լաւ մարդիկ են, բայց ասոր անոր խօսքերէն խաբուած, կարծելով թէ ձշմարտութիւն է ըսածնին, մոլար կարծեաց կը հետեխն, որոնք եթէ բուն շիտակն իր պատճառներով լսելու ըլլան, կ'երեայ որ մտքերնին պիտի շտկուի. և այսպէս շատերուն միաբը շտկուելով, գուցէ թէ ազգերնուս բարիք մը ըլլայ: Ի՞պա թէ ոչ կը տեսնեմ որ հիմակուան ազգերնուս միամտութ բռնած ձամբան ելլելու ձամբայ չէ: Ուսաւորութեան գար, լուսաւորութիւն, սպայծառութիւն, ազգասիրութիւն ըսելով մէկ խեղծութեան մէկալ խեղծութեան անդունդը զլորելու հետ է:

Բայր. Ի՞նչ խելքէ դուրս յուսահատ և սխալ նախապաշարուած մուածութիւններու մէջ զքեզընկղմած կը տեսնեմ, բարեկամ:

— Եեցիր հիմա իմ միտքս քեզի պարզ կերպով մը հասկըցրնեմ, ու անկէ վերջը եթէ սիսալած գտնես զիս, ես ալ քու կարծեացդ կը հետեխմ: Ու ամս զի գիտեմ որ դու այս բանիս մէջ կիրք չունիս, շիտակ ընտրութիւն կրնաս ընել: Կախ զայս բանս քեզի հարցընեմ. մարդս որ երջանկութիւն և հանգստութիւն կը վայելէ, այս վայելովը մարդուս հոգին է թէ մարմինը:

Բայր. Ի՞յդ յայտնի բան է թէ հոգին է. վասն զի մարմիննիս առանց հոգւոյն ոչ բան մը կ'իմանայ, և ոչ ալ բան մը կրնայ վայելել. այս բանիս վրայ ոչ ոք կը տարակուսի:

— Ու պատասխանեցիր: Ուրեմն այս մեր հոգին մարդուս մեռնելէն ետքն ալ հանգիստ, երջանիկ վայելք պիտի ունենայ, թէ մեռնելու ատեն հոգինիս ալ կը փանայ կ'երթայ:

Բայր. Ի՞յդ ի՞նչ ըսելէ: Հոգիներնուս անմահուեր վրայ ոչ ոք կը տարակուսի. մանաւանդ թէ՝ մենք քրիստոնեայ եմք, կը հաւտամք որ մարմիննիս ալ յարութիւն պիտի առնեն ու հոգիներնուս հետ մէկտեղ յաւիտենական երջան. կութիւն պիտի ունենան:

— Ուրեմն այդ յաւիտենական երջան կութիւնը ձեռք ձգելու համար մարդիկ. պէտք է որ հոգ ունենան. չէ նէ ուզեն չուզեն ամենուն պիտի տրուի:

Բայր. Ինչպէս մեր հաւատքը կը սովորեցնէ, պէտք է ջանան, աշխատին մարդիկ որ կարենան ձեռք ձգել:

— Բայց մարդիկ ի՞նչ բանէ կը գրգռուին ջանալու աշխատելու բանի մը համար:

Բայր. Ի՞յն բանին հարկաւորութիւնը և աղեկութիւնը ձանջնալէն:

— Ուրեմն մարդուս իիստ հարկաւոր և ամենէն առաջ հոգալու բանն է իրեն և իր ազգին յաւիտենական երջանկուիթ. և այն ազգը կ'ըսուի լուսաւորեալ, որ զայս ձշմարտութիւնը ձանջցեր է. և զայս ձանջնալէն ետև՝ քաղաքական, բնական և բարոյական օրէնքներով կարգաւորուած, անոր ետեհն է. և այն ատեն այն ազգին համար իր զարն ալ կրնայ ըսուիլ լուսաւորեալդար:

սոր ի՞նչ կ'ըսես:

Բայր. Ի՞յդպէս է. լուսաւորեալ ազգ կ'ըսուի այն ազգը՝ որ իր ձշմարիտ երջանկութեան ձամբան մտեր է: Եւ հիմա մեր ազգայնոց փափաքն ալ է ազգերնիս երջանիկ ընել. և անոր համար լուսաւորեալ դար կը կոչեմք մեր հիմանկուան վիճակին ժամանակը, ըսելէ թէ հիմայ ամենքնիս ալ աղեկութեան ետևէ ենք, իրաբու բարիքը կ'ուզենք, խելք բանեցընել կը սովորինք ու երջանիկ կեանք կ'անցընենք. որով ամէն տեսակ աղեկութիւն կը սկսինք վայելել:

— Բայց այս աղեկութիւններն ու հանգստութիւններն որ ըսիր՝ ազգին վայելեցընելու համար ի՞նչ կարգ սահմանած էն, և ի՞նչ օրէնքի վրայ հաստատուած կը գործէն, և քանի իմաստուն հմուտ անձանց վերակացութեամբ լուսաւորութեան միջոցները ըստ սահմանեալ օրինաց գործադրելու հետ էն:

Բայր. Ի՞մէն մարդ ազատ են, իրենք իրենց կը մտածեն, ու իրենց բարի երեցածն ՚ի գործ կը դնեն:

— Իհա այդ ծուռ սկիզբն է պատճառ չէ թէ յաւաջադիմութեն, այլ բոլորովին մեր փափաքած լուսաւորութէ զըր-

Կուելու : Աիրելի բարեկամ, այդ խօսքովդ աղէկ բացատրեցիր հիմակուան մեր ազգին վիճակը, որ ինչպէս ինձի կ'երևայ, առանց մէկ զիշաւոր սկզբունքի մը վրայ հաստատուելու, և առանց քննելու, սովորելու և միտք առնելու՝ [թէ ինչ է քաղաքականութիւն ըսածնին, ինչ է քնական օրէնք, ձեռքերնին գրիչ բռնել զիտող ու բերաննին քանի մը խօսք ունեցող մարդիկ ազգին առջևն ընկեր, ու իրեւ [թէ իրեն ձամբայ կը ցուցընեն, ազգին լուսառութեան դար կը խոստանան : Ինչպէս [թէ մէկ քանի մարդիկ տեսնելով որ ուրիշները ըսածն վին օգնութեամբ քաղքէ քաղաք մեծ ծովերուն վրայէն ձամբայ կ'ընեն, իրենք ալ ինքիրեննուն յանդգնին ան նաւերուն նման տեսքովնաւեր շինեն՝ առանց գիտնալու նաւ շինելու կանոնները, և ուզեն ձամբայ ընել մեծ ծովու մէջ՝ առանց սովորելու նաւուղութեան օրէնքը : Հայտնի է որ ասոնք չէ [թէ ձամբայ ընելու համար ծով կը մտնեն այդպիսի նաւերով, այլ ընկղմելու և կորսուելու համար : Խստի գիտոցած ըլլաս որ միայն լուսաւորութեան փափաքով, կամ աւելի լաւ ըսեմ, լուսաւորութեան անունը գիտնալով՝ մարդ չլուսաւորուիր, [թէ և միայն քաղաքական լուսաւորութիւն խընդրէ, այլ պէտք է որ կարդ մը օրէնք մը և որոշեալ սահման մը ունենայ. և այս ալ բաւական չէ, այլ և հմուտ և իմաստուն առաջնորդութեան կարօտէ : Ինոր համար՝ [թէ որ մէկ ազգ մը այս կարգս չգիտնայ, ու միայն փափաք ու նենալով հանգստեան, և ամէն մարդ իր մտածածին ետևէն երթարով հասարակաց երջանկութիւն վնասուեն, ուրիշներէն սովորին ալ քաղաքավարութեան և մտաց լուսաւորութեան դէմ սեպէն, և ուրիշի մտաց սկզբանը պէտք չէ խառնուիլ ըսելով՝ պատճառով խօսիլն ու գործելը աւելորդ սեպէն, և մէկ ընդհանուր վախճան մը միաբան չդիտեն, այլ ամէն մէկերնին մտքերնին դրած՝ [թէ հանգիստ ըլլալու և փառաւորութիւնը ձամբան պարեկամ դտեր են իւրա-

քանչիւր իր մտքին դրածին հետեւ լով, ասիկայ ինձի ելլելու ձամբայ մը չերենար, հապա մանաւանդ գահավէժ կործանման վախ մը կու տայ : Ի բանկով ոչ քաղաքականութիւն կ'ըլլայ, ոչ ուսումնականութիւն, և ոչ հարստութեան մամբայ կը բացուի, այլ միայն առջի տգիտութեան և իւղանութեան վրայ կ'աւելնայ մէկ անմիտ և կոյր հպարտութիւն մը : Ինչպէս մէկ տկար ացք ունեցող մը առանց աշաբուժութեան արուեստը գիտնալու, միտքը գնէ [թէ ես ինքիրէս իմ ացքս կ'աւողջացընեմ, ու վասակար գեղերով աւելի տկարացընէ, ու սկսի որոշ բան մը չտեսնել՝ այլ միայն խաւանակ շփոթ լոյս մը . և քանի մը ձրագ վառած տեղը իր ացքին երենան շատ ձրագներու խառնակ լոյս մը, և ինքը փոխանակ ցաւելու՝ որ իր ացքին վասացուց, սկսի ուրախանալ՝ [թէ իր աչքը ուրիշներէն լուսաւոր եղաւ առանց բժկի կարօտ ըլլալու, որովհետեւ քիչ ձրագով շատ լոյս կը տեսնէ, մինչ գեռուրիշները մեծ իրաւամբ կը ցաւին անոր կուրնալուն վրայ : Ի յնպիսի լուսով բան տեսնողը առասպելեալ Տանտաղոսին պատժոյն մէջն է, որուն ինչուան շրթունքը գետի մէջը ընկղմած ու ինքը սաստիկ ծարւով կը տանջուեր, չկրնալով բերանը ջրոյն հասցընել : Ի բանց կարգի, առանց օրէնքի և առանց սովորեցնողի եղած ազգին լուսաւորութիւնը հայա այսաւափ կընայ ըլլալ :

Աիրելի բարեկամ, լաւ ձանշնալով [թէ զուն ալ գիտես ազգերնուս յառաջաղիմութեանը համար ունեցած փափաքանացս առաւելութիւնը, չեմ տարակուսիր՝ [թէ խօսքերս ազգերնիս նախատելու մաքով զրուցած սեպէս, և կիմ թէ իրեն այժմեան ջանիցը արգելք : Ի նախ աս պիտի գիտնաս որ իմ խօսքս առանձին մարդկանց վրայ չէ, այլ ընդհանուր ազգերնուս վիճակին վրայ . որովհետեւ ազգին բավանդակուիր ինչ վիճակի մէջոր է, առանձին մարդիկ ալ ազգին մէյմէկ փոքր մասունքն ըլլալով, ուզեն չուզեն նոյն վիճակին մէջ կը գտնուին .